Աշխատանքային այցեր խոշորացվող համայնքներ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Սյունիքի մարզերի համայնքների խոշորացման գործընթացներին հետևելու և առկա խնդիրներին տեղում ծանոթանալու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի հրամանով իրականացվել են աշխատանքային այցեր:

Այցերի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության կողմից կազմակերպված՝ «Վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում 15 փնջերին աջակցություն՝ հաղորդակցության միջոցառումներին և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրային գաղափարների մշակում» թեմայով աշխատանքային սեմինարը:

Միջոցառմանը մասնակցում էին փնջերում ընդգրկված համայնքների, ապագա բնակավայրերի վարչական աշխատողներ, մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչներ, համայնքային ծառայողներ, մարզային իշխանության ներկայացուցիչներ: Խոշորացվող համայնքներում այս աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

Միջոցառման մասնակիցներին բացման խոսքով դիմեցին ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ Ա. Գիլոյանը, Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության կողմից ծրագրի համակարգող Ա. Քեշիշյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Ա. Գրիգորյանը: Հանգամանալից ներկայացվեցին միջոցառման նպատակները, խնդիրները, մասնակիցների ակնկալիքները և հետագա քայլերը:

Գերմանիայի միջազգային զարգացման ընկերության կողմից սեմինարը վարեցին RDF խորհրդատվական ընկերության ներկայացուցիչներ Վ. Կարապետյանը, Ա. Դադոյանը, Ա. Գրիգորյանը և Գ. Մուրադյանը: Փորձագետները սեմինար-խորհրդակցությունը վարեցին «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» (PACA), «Մասնակցային ախտորոշման և գնահատման գործիք» (COMPASS) և այլ՝ միջազգային ճանաչում ունեցող մեթոդաբանությունների հիման վրա:

Աշխատանքները կազմակերպվեցին պլենար և աշխատանքային խմբերի միջոցով: Աշխատանքային խմբերի մասնակիցները պատասխանեցին երեք հարցերի՝ «Որո՞նք են մեր համայնքի խնդիրները», «Ի՞նչ ռեսուրսներ ունենք դրանց լուծումներ տալու համար» և «Ի՞նչ ծրագրեր են հարկավոր՝ դրված խնդիրները լուծելու համար»:

Պատասխանները խմբավորվեցին և գնահատվեցին «բալային գնահատման աղյուսակի» միջոցով և ծրագրային գաղափարներին տրվեցին կշիռներ: Բարձրացված խնդիրներից էին ա) այգեգործության զարգացում (կաթ, ոռոգում), բ) մասսայական միջոցառումների տեխնիկա, գ) հիվանդանոցի գործարկում (սարքեր և բուժտեխնիկա), դ) քաղաքային այգու վերանորոգում, ե)

աղբահանություն (վերազինում), զ) ճանապարհների ձմեռային սպասարկման տեխնիկա, է) մեքենատրակտորային պարկ, ը) շենքերի տանիքների և բակերի վերանորոգում, թ) Հերհերի և Կարմրաշենի ճանապարհների վերանորոգում, ժ) բնակարաններ երիտասարդ ընտանիքների համար և այլն: Այս գաղափարները հետագայում կլրամշակվեն, փորձագիտական նախնական գնահատականներ կտրվեն, և ամփոփ հաշվետվությունները կտրամադրվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը:

Այս համատեղ աշխատանքի հիման վրա գույքագրվում են փնջերում զարգացման հեռանկարները՝ նշյալ մեթոդաբանությունների հիման վրա, վեր են հանվում համայնքի կարիքներն ու առաջնահերթությունները, դրանք համադրվում են մարդկային, ֆինանսական, տեխնիկական և այլ առկա ռեսուրսների հետ, ինչպես նաև կազմվում է համատեղծ քննարկված և համաձայնեցված ծրագրային գաղափարների ցանկը, որից մեկ-երկու ամենաբարձր կշիռներ ստացածները մանրամասնեցվելու են՝ հետագայում հիմք հանդիսանալով ծրագրային առաջարների ու հայտերի մշակման համար:

Միջոցառման արդյունքում կազմվում են փնջերի ծրագրային գաղափարների ընդհանուր պատկերները, որոնք կարող են օգտագործվել ընտրություններից հետո ձևավորված համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի մշակման, պոտենցիալ դոնորների (այդ թվում՝ պետություն, միջազգային կազմակերպություններ, սփյուռք, քույր-քաղաք պայմանավորվածություններ և այլն) հետ ծրագրային համագործակցության հիմք:

Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին:

Աշխատանքային այցերը կրում են շարունակական բնույթ և ներառելու են բոլոր խոշորացվող համայնքային փնջերը: